ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

16 մայիսի 2016 թվականի **թիվ 149** քաղ. Մոսկվա

Ժամանակավոր սանիտարական, անասնաբուժասանիտարական եւ կարանտինային բուսասանիտարական միջոցառումներ սահմանելիս Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների լիազորված մարմինների փոխգործակցության կարգը

«Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 56-րդ հոդվածի 4-րդ կետի երկրորդ պարբերությանը եւ Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2014 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 98 որոշմամբ հաստատված՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի աշխատանքի կանոնակարգի թիվ 1 հավելվածի 52-րդ կետին համապատասխան՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհուրդը **որոշեց**.

1. Հաստատել սանիտարական, անասնաբուժասանիտարական եւ կարանտինային բուսասանիտարական միջոցառումներ սահմանելիս Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների լիազորված մարմինների փոխգործակցության կարգը։

2. Եվրասիական տնտեսական հանձնաժողովին՝ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների կառավարությունների հետ համատեղ սույն Որոշման 1-ին կետում նշված կարգի իրավակիրառ պրակտիկայի դիտանցման արդյունքներով՝ 2016 թվականի IV եռամսյակում որոշումը լրացնելու

մասով առաջարկություններ անել, այդ թվում՝ սահմանելով «ժամանակավոր սանիտարական միջոցառումներ», «ժամանակավոր անասնաբուժասանիտարական միջոցառումներ», «ժամանակավոր կարանտինային բուսասանիտարական միջոցառումներ», «ժամանակավոր սանիտարական, անասնաբուժասանիտարական եւ կարանտինայի բուսասանիտարական միջոցառումների սահմանման հիմնավորում» ու «ժամանակավոր սանիտարական, անասնաբուժասանիտարական եւ կարանտինային բուսասանիտարական միջոցառումների էություն» հասկացությունները։

3. Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվանից 30 օրացուցային օրը լրանալուց հետո։

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի անդամներ՝

Հայաստանի Հանրապետությունից՝	**Բելառուսի Հանրապետությունից՝**	**Ղազախստանի Հանրապետությունից՝**	**Ղրղզստանի Հանրապետությունից՝**	**Ռուսաստանի Դաշնությունից՝**
Վ. Գաբրիելյան	**Վ. Մատյուշեւսկի**	**Բ. Սագինտաեւ**	**Օ. Պանկրատով**	**Ի. Շուվալով**

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Եվրասիական տնտեսական
հանձնաժողովի խորհրդի
2016 թվականի մայիսի 16-ի
թիվ 149 որոշմամբ

ԿԱՐԳ

ժամանակավոր սանիտարական, անասնաբուժասանիտարական եւ կարանտինային բուսասանիտարական միջոցառումներ սահմանելիս Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների լիազորված մարմինների փոխգործակցության

I. Ընդհանուր դրույթներ

1. Սույն Կարգը մշակվել է «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 56-րդ հոդվածի 4-րդ կետի երկրորդ պարբերությանը համապատասխան եւ սահմանում է ժամանակավոր սանիտարական, անասնաբուժասանիտարական եւ կարանտինային բուսասանիտարական միջոցառումներ (այսուհետ՝ ժամանակավոր միջոցառումներ) սահմանելիս Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների լիազորված մարմինների (այսուհետ, համապատասխանաբար, անդամ պետությունների լիազորված մարմիններ, Միություն) փոխգործակցության կանոնները:

2. Սույն Կարգում օգտագործվող մյուս հասկացություններն ընկալվում են «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրով սահմանված իմաստներով:

II. Ժամանակավոր անասնաբուժասանիտարական միջոցառում սահմանելիս լիազորված մարմինների փոխգործակցության կարգը

3. Ժամանակավոր անասնաբուժասանիտարական միջոցառում սահմանելիս համապատասխան որոշում ընդունած անդամ պետության լիազորված մարմինը, առանց անհիմն ուշացման, այդ մասին տեղեկացնում է մյուս անդամ պետությունների լիազորված մարմիններին ոչ ուշ, քան ժամանակավոր անասնաբուժասանիտարական միջոցառում սահմանելու մասին որոշում ընդունելու օրվանից 1 աշխատանքային օրվա ընթացքում, ինչպես նաեւ Եվրասիական տնտեսական հանձնաժողովին (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ ոչ ուշ, քան այդպիսի որոշում ընդունելու օրվանից 3 աշխատանքային օրվա ընթացքում։ Ժամանակավոր անասնաբուժասանիտարական միջոցառում սահմանելու մասին տեղեկատվությունը պարունակում է հետեւյալ տեղեկությունները՝

ա) միջոցառում սահմանելու հիմնավորումը.

բ) միջոցառում սահմանելու անհրաժեշտության հիմնավորումը*.

գ) սահմանվող միջոցառման էությունը (նկարագրությունը).

դ) միջոցառում սահմանելու ամսաթիվը։

4. Սույն Կարգի 3-րդ կետում նշված տեղեկատվությունն ստանալու դեպքում լիազորված մարմինները, հնարավորինս սեղմ ժամկետում, սակայն ոչ ուշ, քան այդ տեղեկատվությունն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում, ուսումնասիրում են ներկայացված տեղեկությունները եւ ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ տեղեկատվությունն ուղարկում լիազորված մարմիններ եւ Հանձնաժողով, այդ թվում՝ ժամանակավոր անասնաբուժասանիտարական միջոցառում սահմանելու հարցի վերաբերյալ իրենց դիրքորոշումը հիմնավորելու անհրաժեշտության դեպքում։

Անդամ պետության կողմից ժամանակավոր անասնաբուժասանիտարական միջոցառում սահմանելիս մյուս անդամ պետությունները՝

ձեռնարկում են միջոցներ, որոնք ապահովում են ժամանակավոր

անասնաբուժասանիտարական միջոցառում սահմանելու մասին որոշում ընդունած անդամ պետության պաշտպանության պատշաճ մակարդակը.

լիազորված մարմիններ եւ Հանձնաժողով են ուղարկում իրենց տարածքում ժամանակավոր անասնաբուժասանիտարական միջոցառում սահմանելու կամ ժամանակավոր անասնաբուժասանիտարական միջոցառում սահմանելու մասին որոշում ընդունած անդամ պետության պաշտպանության պատշաճ մակարդակն ապահովող միջոցներ ձեռնարկելու վերաբերյալ տեղեկատվությունը:

5. Լիազորված մարմիններն ու Հանձնաժողովն ունեն ժամանակավոր սահմանվող անասնաբուժասանիտարական միջոցառման մասին լրացուցիչ տեղեկատվություն պահանջելու իրավունք: Այդ տեղեկատվությունը լիազորված մարմին եւ Հանձնաժողով է ներկայացվում նշված պահանջն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում:

6. Ժամանակավոր անասնաբուժասանիտարական միջոցառում փոփոխելու, չեղարկելու դեպքում համապատասխան որոշում ընդունած անդամ պետության լիազորված մարմինն առանց անհիմն ուշացման այդ մասին տեղեկացնում է մյուս անդամ պետությունների լիազորված մարմիններին ոչ ուշ, քան ժամանակավոր անասնաբուժասանիտարական միջոցառում փոփոխելու, չեղարկելու մասին որոշում ընդունելու օրվանից 1 աշխատանքային օրվա ընթացքում, ինչպես նաեւ Հանձնաժողովին՝ ոչ ուշ, քան համապատասխան որոշում ընդունելու օրվանից 3 աշխատանքային օրվա ընթացքում:

ժամանակավոր անասնաբուժասանիտարական միջոցառմանը միացած անդամ պետությունների լիազորված մարմիններն առանց անհիմն ուշացման դրա եւ անցկացվող միջոցառումների մասին տեղեկացնում են մյուս անդամ պետությունների լիազորված մարմիններին (նշելով ժամանակավոր անսանաբուժասանիտարական միջոցառումը սահմանելու, փոփոխելու, չեղարկելու հիմնավորումը եւ համապատասխան որոշում ընդունելու ամսաթիվը) ժամանակավոր անասնաբուժասանիտարական միջոցառումը սահմանելու, փոփոխելու, չեղյալ ճանաչելու մասին որոշում ընդունելու օրվանից

1 աշխատանքային օրվա ընթացքում, ինչպես նաեւ Հանձնաժողովին՝ այդպիսի որոշում ընդունելու օրվանից 3 աշխատանքային օրվա ընթացքում։

7. Անասնաբուժասանիտարական միջոցառում սահմանելու, փոփոխելու, չեղարկելու մասին տեղեկատվությունը հրապարակվում է անդամ պետության լիազորված մարմնի պաշտոնական կայքում եւ «Ինտերնետ» տեղեկատվական-հաղորդակցական ցանցի Միության պաշտոնական կայքում անդամ պետության պետական լեզվով եւ ռուսերենով՝ առանց անհիմն ուշացման, բայց ոչ ուշ, քան համապատասխան որոշում ընդունելու օրվանից 3 աշխատանքային օրվա ընթացքում։

III. Ժամանակավոր կարանտինային բուսասանիտարական միջոցառում սահմանելիս լիազորված մարմինների փոխգործակցության կարգը

8. Ժամանակավոր կարանտինային բուսասանիտարական միջոցառում սահմանելիս համապատասխան որոշում ընդունած անդամ պետության լիազորված մարմինը, առանց անհիմն ուշացման, այդ մասին տեղեկացնում է մյուս անդամ պետությունների լիազորված մարմիններին ոչ ուշ, քան ժամանակավոր կարանտինային բուսասանիտարական միջոցառում սահմանելու մասին որոշում ընդունելու օրվանից 1 աշխատանքային օրվա ընթացքում, ինչպես նաեւ Հանձնաժողովին՝ ոչ ուշ, քան այդպիսի որոշում ընդունելու օրվանից 3 աշխատանքային օրվա ընթացքում։ Ժամանակավոր կարանտինային բուսասանիտարական միջոցառում սահմանելու մասին տեղեկատվությունը պարունակում է հետեւյալ տեղեկությունները՝

ա) միջոցառում սահմանելու հիմնավորումը.

բ) միջոցառում սահմանելու անհրաժեշտության հիմնավորումը*.

գ) սահմանվող միջոցառման էությունը (նկարագրությունը), այդ թվում՝ տեղեկություններ այդպիսի միջոց սահմանելու մասին որոշում ընդունած անդամ պետության տարածքում եւ անդամ պետության մաքսային սահմանի

համապատասխան հատվածում ժամանակավոր կարանտինային բուսասանիտարական միջոցի պահպանումն ապահովող միջոցառումների վերաբերյալ.

դ) միջոցառում սահմանելու ամսաթիվը.

ե) սահմանվող միջոցառման վերաբերյալ այլ տեղեկություններ։

9. Սույն Կարգի 8-րդ կետում նշված տեղեկատվությունն ստանալիս լիազորված մարմինները, հնարավորինս սեղմ ժամկետում, բայց ոչ ուշ, քան այդպիսի տեղեկատվությունն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում, ուսումնասիրում են ներկայացված տեղեկությունները եւ լիազորված մարմիններ ու Հանձնաժողով են ուղարկում ուսումնասիրության արդյունքների մասին տեղեկատվությունը, այդ թվում՝ անհրաժեշտության դեպքում, ժամանակավոր կարանտինային բուսասանիտարական միջոցառում սահմանելու հարցում իրենց դիրքորոշումը։

Անդամ պետության կողմից ժամանակավոր կարանտինային բուսասանիտարական միջոցառում սահմանելիս մյուս անդամ պետությունները՝

ձեռնարկում են միջոցներ, որոնք ապահովում են ժամանակավոր կարանտինային բուսասանիտարական միջոցառում սահմանելու մասին որոշում ընդունած անդամ պետության պաշտպանության պատշաճ մակարդակը.

լիազորված մարմիններ եւ Հանձնաժողով են ուղարկում իրենց տարածքում ժամանակավոր կարանտինային բուսասանիտարական միջոցառում սահմանելու մասին կամ ժամանակավոր կարանտինային բուսասանիտարական միջոցառում սահմանելու մասին որոշում ընդունած անդամ պետության պաշտպանության պատշաճ մակարդակ ապահովող միջոցներ ձեռնարկելու վերաբերյալ տեղեկատվություն:

10. Լիազորված մարմինները եւ Հանձաժողովն ունեն ժամանակավոր կարանտինային բուսասանիտարական միջոցառում սահմանելու մասին լրացուցիչ տեղեկատվություն պահանջելու իրավունք: Այդ տեղեկատվությունը

լիազորված մարմին եւ Հանձնաժողով է ներկայացվում նշված պահանջն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում:

11. Ժամանակավոր կարանտինային բուսասանիտարական միջոցառումը փոփոխելու, չեղարկելու դեպքում համապատասխան որոշում ընդունած անդամ պետության լիազորված մարմինը, առանց անհիմն ուշացման, այդ մասին տեղեկացնում է մյուս անդամ պետությունների լիազորված մարմիններին ոչ ուշ, քան ժամանակավոր կարանտինային բուսասանիտարական միջոցառումը փոփոխելու, չեղարկելու մասին որոշում ընդունելու օրվանից 1 աշխատանքային օրվա ընթացքում, ինչպես նաեւ Հանձնաժողովին՝ ոչ ուշ, քան համապատասխան որոշում ընդունելու օրվանից 3 աշխատանքային օրվա ընթացքում:

Ժամանակավոր կարանտինային բուսասանիտարական միջոցառմանը միացած անդամ պետությունների լիազորված մարմինները, առանց անհիմն ուշացման, դրա եւ անցկացվող միջոցառումների մասին տեղեկացնում են մյուս անդամ պետությունների լիազորված մարմիններին (նշելով ժամանակավոր կարանտինային բուսասանիտարական միջոցառում սահմանելու, փոփոխելու, չեղարկելու հիմնավորումը եւ համապատասխան որոշում ընդունելու ամսաթիվը)՝ ժամանակավոր կարանտինային բուսասանիտարական միջոցառում սահմանելու, փոփոխելու, չեղարկելու մասին որոշում ընդունելու օրվանից 1 աշխատանքային օրվա ընթացքում, ինչպես նաեւ Հանձնաժողովին՝ այդպիսի որոշում ընդունելու օրվանից 3 աշխատանքային օրվա ընթացքում:

12. Ժամանակավոր կարանտինային բուսասանիտարական միջոցառում սահմանելու, փոփոխելու, չեղարկելու մասին տեղեկատվությունը հրապարակվում է անդամ պետության լիազորված մարմնի պաշտոնական կայքում եւ «Ինտերնետ» տեղեկատվական-հաղորդակցական ցանցի Միության պաշտոնական կայքում՝ անդամ պետության պետական լեզվով եւ ռուսերենով, առանց անհիմն ուշացման, բայց ոչ ուշ, քան համապատասխան որոշումն ընդունելու օրվանից 3 աշխատանքային օրվա ընթացքում:

IV. Ժամանակավոր սանիտարական միջոցառում սահմանելիս լիազորված մարմինների փոխգործակցության կարգը

13. Ժամանակավոր սանիտարական միջոցառում (ժամանակավոր սանիտարական միջոցառումներ) սահմանելիս համապատասխան որոշում ընդունած անդամ պետության լիազորված մարմինը, առանց անհիմն ուշացման, այդ մասին տեղեկացնում է մյուս անդամ պետությունների լիազորված մարմիններին ոչ ուշ, քան ժամանակավոր սանիտարական միջոցառում սահմանելու մասին որոշում ընդունելու օրվանից 1 աշխատանքային օրվա ընթացքում, ինչպես նաեւ Հանձնաժողովին՝ ոչ ուշ, քան այդպիսի որոշում ընդունելու օրվանից 3 աշխատանքային օրվա ընթացքում։ Ժամանակավոր սանիտարական միջոցառում սահմանելու մասին տեղեկատվության մեջ ներառվում են հետեւյալ տեղեկությունները՝

ա) միջոցառում սահմանելու հիմնավորումը.

բ) միջոցառում սահմանելու անհրաժեշտության հիմնավորումը (առկայության դեպքում)*.

գ) սահմանվող միջոցառման էությունը (նկարագրությունը).

դ) միջոցառում սահմանելու ամսաթիվը։

14. Պետական սանիտարահամաճարակաբանական վերահսկողության (հսկողության) վերցված արտադրանքի (ապրանքների) ներմուծման նկատմամբ արգելքների եւ սահմանափակումների առնչությամբ ժամանակավոր սանիտարական միջոց սահմանելիս դրա սահմանման վերաբերյալ տեղեկատվության մեջ ներառվում են հետեւյալ լրացուցիչ տեղեկությունները՝

ա) արտադրանքի (ապրանքների) անվանումն ու նկարագրությունը (մականշվածքի վրա նշված անունը).

բ) արտադրանքի (ապրանքների) մասին տվյալներ (քանակը, խմբաքանակի

(խմբաքանակների) նույնականացումը՝ ներառյալ խմբաքանակի (խմբաքանակների) համարը, արտադրության ամսաթիվը).

գ) պատրաստողը, ներմուծողը եւ (կամ) արտադրանքի (ապրանքների) շրջանառությանը մասնակցող այլ անձինք.

դ) ապրանքաուղեկից փաստաթղթերի անվանումն ու վավերապայմանները, պետական սանիտարահամաճարակաբանական վերահսկողության (հսկողության) վերցված արտադրանքի (ապրանքների) մասին տեղեկություններ, որոնք նշված են այդ փաստաթղթերում (առկայության դեպքում).

ե) սանիտարահամաճարակաբանական վերահսկողության (հսկողության) ենթակա արտադրանքին (ապրանքներին) ներկայացվող միասնական սանիտարահամաճարակաբանական եւ հիգիենիկ պահանջներին եւ (կամ) Միության տեխնիկական կանոնակարգերի պահանջներին (առկայության դեպքում) արտադրանքի (ապրանքների) համապատասխանությունը հաստատող փաստաթղթերի մասին տվյալներ.

զ) սանիտարահամաճարակաբանական վերահսկողության (հսկողության) ենթակա արտադրանքին (ապրանքներին) ներկայացվող միասնական սանիտարահամաճարակաբանական ու հիգիենիկ պահանջների եւ (կամ) Միության տեխնիկական կանոնակարգերի պահանջների հայտնաբերված խախտումների ցանկը (նշելով տվյալ պահանջները եւ դրանց պարամետրերը սահմանած՝ Միության իրավունքի մաս կազմող ակտը), ում կողմից ու երբ են հայտնաբերվել (կցելով փորձանմուշներ վերցնելու ակտը եւ փորձարկումների արձանագրությունը (արձանագրությունները) (առկայության դեպքում)):

15. Ժամանակավոր սանիտարական միջոցառում սահմանելիս անդամ պետության տարածքում սանիտարահամաճարակաբանական իրավիճակի վատթարացման եւ (կամ) համապատասխան միջազգային կազմակերպություններից, անդամ պետություններից եւ (կամ) երրորդ երկրներից սանիտարահամաճարակաբանական իրավիճակի վատթարացման մասին տեղեկատվություն ստանալու դեպքում (տարածքի սանիտարական

պաշտպանության միջոցառումների անցկացում պահանջող վարակիչ, զանգվածային ոչ վարակիչ հիվանդությունների (թունավորումների) եւ անդամ պետության տարածքում հանրային առողջության համար սպառնալիք ներկայացնող սանիտարահամաճարակաբանական բնույթի արտակարգ իրավիճակների հետ կապված իրավիճակի փոփոխություն՝ վատթարացման ուղղությամբ)՝ լիազորված մարմինն իր պետության տարածքում եւ Միության մաքսային տարածքում վարակիչ եւ զանգվածային ոչ վարակիչ հիվանդությունների (թունավորումների) առաջացման ու տարածման կանխարգելման նպատակներով անհապաղ, սակայն ոչ ուշ, քան այդ տեղեկատվությունն ստանալու օրվանից 1 աշխատանքային օրվա ընթացքում, սույն Կարգի 13-րդ կետում նշված տեղեկատվությունից բացի, մյուս անդամ պետությունների լիազորված մարմիններ եւ Հանձնաժողով է ներկայացնում տեղեկություններ հետեւյալի մասին՝

ա) սանիտարահամաճարակաբանական իրավիճակի վատթարացման օրը եւ ժամը.

բ) այն վայրը (հանրապետությունը, երկրամասը, մարզը, շրջանը, տարածքի հատվածը, բնակավայրը), որտեղ արձանագրվել է սանիտարահամաճարակաբանական իրավիճակի վատթարացումը.

գ) սանիտարահամաճարակաբանական իրավիճակի վատթարացման պատճառը.

դ) տարածման գոտին.

ե) անդամ պետության պաշտպանության պատշաճ մակարդակն ապահովող միջոցների ձեռնարկումը եւ սանիտարահակահամաճարակաբանական ու այլ միջոցառումների անցկացումը:

16. Սույն Կարգի 13-15-րդ կետերում նշված տեղեկատվությունն ստանալու դեպքում լիազորված մարմինները հնարավորինս սեղմ ժամկետում, սակայն ոչ ուշ, քան այդ տեղեկատվությունն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա

ընթացքում, ուսումնասիրում են ներկայացված տեղեկությունները եւ ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ տեղեկատվությունն ուղարկում լիազորված մարմիններ ու Հանձնաժողով, այդ թվում՝ ժամանակավոր սանիտարական միջոցառում սահմանելու հարցի վերաբերյալ իրենց դիրքորոշումը հիմնավորելու անհրաժեշտության դեպքում:

Անդամ պետության կողմից ժամանակավոր սանիտարական միջոցառում սահմանելիս մյուս անդամ պետությունները՝

ձեռնարկում են անհրաժեշտ միջոցներ եւ անցկացնում սանիտարահակահամաճարակաբանական միջոցառումներ, որոնք ապահովում են ժամանակավոր սանիտարական միջոցառում սահմանելու մասին որոշում ընդունած անդամ պետության պաշտպանության պատշաճ մակարդակը.

լիազորված մարմիններ եւ Հանձնաժողով են ուղարկում իրենց տարածքում ժամանակավոր սանիտարական միջոցառում սահմանելու վերաբերյալ կամ ժամանակավոր սանիտարական միջոցառում սահմանելու մասին որոշում ընդունած անդամ պետության պաշտպանության պատշաճ մակարդակն ապահովող անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելու եւ սանիտարահակահամաճարակաբանական միջոցառումներ անցկացնելու վերաբերյալ տեղեկատվություն:

17. Լիազորված մարմինները եւ Հանձնաժողովն ունեն ժամանակավոր սանիտարական միջոցառում սահմանելու մասին լրացուցիչ տեղեկատվություն պահանջելու իրավունք: Այդ տեղեկատվությունը լիազորված մարմին եւ Հանձնաժողով է ներկայացվում նշված պահանջն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում:

18. Ժամանակավոր սանիտարական միջոցառումը փոփոխելու, չեղարկելու դեպքում համապատասխան որոշում ընդունած անդամ պետության լիազորված մարմինը, առանց անհիմն ուշացման, այդ մասին տեղեկացնում է մյուս անդամ պետությունների լիազորված մարմիններին ոչ ուշ, քան ժամանակավոր սանիտարական միջոցառումը փոփոխելու, չեղարկելու մասին որոշում ընդունելու

օրվանից 1 աշխատանքային օրվա ընթացքում, ինչպես նաեւ Հանձնաժողովին՝ ոչ ուշ, քան համապատասխան որոշում ընդունելու օրվանից 3 աշխատանքային օրվա ընթացքում։

Ժամանակավոր սանիտարական միջոցառմանը միացած անդամ պետությունների լիազորված մարմինները, առանց անհիմն ուշացման, դրա եւ անցկացվող միջոցառումների մասին տեղեկացնում են մյուս անդամ պետությունների լիազորված մարմիններին (նշելով ժամանակավոր սանիտարական միջոցառում սահմանելու, փոփոխելու, չեղարկելու հիմնավորումը եւ համապատասխան որոշում ընդունելու ամսաթիվը)՝ ժամանակավոր սանիտարական միջոցառում սահմանելու, փոփոխելու, չեղարկելու մասին որոշում ընդունելու օրվանից 1 աշխատանքային օրվա ընթացքում, ինչպես նաեւ Հանձնաժողովին՝ այդպիսի որոշում ընդունելու օրվանից 3 աշխատանքային օրվա ընթացքում։

19. Ժամանակավոր սանիտարական միջոցառում սահմանելու, փոփոխելու, չեղարկելու մասին տեղեկատվությունը հրապարակվում է անդամ պետության լիազորված մարմնի պաշտոնական կայքում եւ «Ինտերնետ» տեղեկատվական-հաղորդակցական ցանցի Միության պաշտոնական կայքում՝ անդամ պետության պետական լեզվով եւ ռուսերենով, առանց անհիմն ուշացման, բայց ոչ ուշ, քան համապատասխան որոշումն ընդունելու օրվանից 1 աշխատանքային օրվա ընթացքում։

V. Խորհրդակցությունները եւ վեճերի կարգավորումը

20. Մեկ այլ անդամ պետության կողմից սահմանված ժամանակավոր միջոցառմանը չմիացած անդամ պետության լիազորված մարմնի նախաձեռնությամբ կարող են անցկացվել լիազորված մարմինների խորհրդակցություններ ժամանակավոր միջոցառում սահմանելու մասին որոշում ընդունած անդամ պետության տարածք այն արտադրանքի (ապրանքների) ներմուծման հնարավորությունը, կարգն ու պայմանները որոշելու համար, որի

նկատմամբ սահմանվել է ժամանակավոր միջոցառումը՝ ժամանակավոր միջոցառմանը չմիացած անդամ պետության տարածքում դրա տեղափոխման (տարանցիկ փոխադրման) համար։

Ժամանակավոր միջոցառում սահմանելու մասին որոշում ընդունած անդամ պետության լիազորված մարմինը մյուս անդամ պետությունների եւ Հանձնաժողովի լիազորված մարմիններին տեղեկացնում է նշված խորհրդակցությունների արդյունքներով ձեռք բերված պայմանավորվածությունների մասին։

21. Լիազորված մարմինների միջեւ տարաձայնությունների առկայության դեպքում շահագրգիռ անդամ պետությունը նախաձեռնում է ժամանակավոր միջոցառում սահմանելու մասին որոշում ընդունած անդամ պետության լիազորված մարմնի հետ խորհրդակցությունների անցկացում։

Խորհրդակցությունները կարող են անցկացվել Հանձնաժողովի շինություններում։ Առաջիկա խորհրդակցությունների վերաբերյալ տեղեկատվությունն այդ դեպքում ներկայացվում է Հանձնաժողով ոչ ուշ, քան դրանք անցկացնելուն նախորդող 3 աշխատանքային օրվա ընթացքում։

22. Եթե տարաձայնությունները չեն կարգավորվել սույն Կարգի 21-րդ կետով նախատեսված խորհրդակցությունների շրջանակներում, ապա լիազորված մարմինները կարող են Հանձնաժողովի ներկայացուցիչների մասնակցությամբ լիազորված մարմինների խորհրդակցություններ անցկացնելու վերաբերյալ առաջարկությամբ դիմել Հանձնաժողով ոչ ուշ, քան դիմումն ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում։

23. Եթե խորհրդակցությունների արդյունքներով տարաձայնությունները չեն կարգավորվել սույն Կարգի 22-րդ կետին համապատասխան, լիազորված մարմինների միջեւ տարաձայնությունների վերաբերյալ հարցը կարող է ուսումնասիրվել Հանձնաժողովի մարմնի նիստին՝ պարտադիր հրավիրելով լիազորված մարմինների ներկայացուցիչներին։

24. Վեճերի կարգավորումն իրականացվում է «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 112-րդ հոդվածին համապատասխան:

VI. Եզրափակիչ դրույթներ

25. Լիազորված մարմինների եւ Հանձնաժողովի միջեւ տեղեկատվության փոխանակումը, սույն Կարգին համապատասխան, իրականացվում է պաշտոնական նամակների միջոցով, այդ թվում՝ էլեկտրոնային տարբերակով եւ Միության ինտեգրված տեղեկատվական համակարգի օգտագործմամբ:

Այդպիսի նամակները կարող են ձեւավորվել եւ ուղարկվել անդամ պետությունների կողմից օգտագործվող ավտոմատացված տեղեկատվական համակարգերի օգտագործմամբ:

26. Ժամանակավոր միջոցառում սահմանելու, փոփոխելու կամ չեղարկելու ժամանակ համապատասխան որոշումն ընդունած անդամ պետության լիազորված մարմինը, իր օրենսդրությանը համապատասխան, այդ մասին տեղեկացնում է տվյալ անդամ պետության այլ շահագրգիռ մարմինների:

*Անասնաբուժասանիտարական, կարանտինային բուսասանիտարական կամ սանիտարական միջոց սահմանելու անհրաժեշտության հիմնավորման մեջ պետք է ներառվեն մյուս անդամ պետությունների և երրորդ երկրների տարածքում հսկողության վերցված ապրանքների (արտադրանքի) տեղափոխման (տարանցիկ փոխադրման) վերաբերյալ տեղեկություններ, եթե սահմանվող միջոցը համապատասխան սահմանափակումներ է նախատեսում: